ՆԿԱՐԱԳԻՐ

առաջարկվող ապրանքի ամբողջական

ՈՒՐԱՐՏՈՒ ԱԱԿ ԲԲԸ-ն ԷԱՃԱՊՁԲ-ԱԻՆ-22/27 ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

Չափաբաժնի համար	Առաջարկվող ապրանքի			
	ֆիրմային անվանումը	ապրանքային նշանը	արտադրողի անվանումը	տեխնիկական բնութագիրը
1	ՈՒՐԱՐՏՈՒ Ա.Ա.Կ. ԲԲԸ	hh	ՈՒՐԱՐՏՈՒ Ա.Ա.Կ. ԲԲԸ	Մեդալը բաղկացած է չժանգոտվող ցինկապատ պողպատե կախիչից և դրան կապօղակով ամրացած սկավառակից: Կախիչը ասեղային ամրակով. Սկավառակն արտադրվում է առնվազը 75% պղնձի պարունակությամբ համաձուլվածքից, փայլատ մակերես ստանալու տեխնոլոգիայով (էլեկտրոէռոզիոն մշակման մեթոդով ստացվող փայլուն մատային մակերես Ն2 սանդղակով), դրոշման եղանակով, անցնում է հատուկ գալվանական մշակում և ոսկեպատվում 900-ից բարձր հարգի ոսկով՝ նվազագույնը 0,5 մկմ հաստությամբ: Տրամագիծը՝ 38մմ, հաստությունը՝ 2.5մմ (շեղում՝ +/- 0.2մմ): Մեդալն իրենից ներկայացնում է ոսկեգույն շրջանակ՝ եզրագծված ոսկեգույն դափնեպսակով: Կենտրոնում ութաթև աստղ է, աստղի կենտրոնում երկրագնդի խորհրդանիշը, որի վրայի

				հավասա¬րակողմ եռանկյունը քաղաքացիական պաշտպանության խորհրդա¬նիշն է: Դափնեպսակի վերին մասում գրված են «ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ», հավասարակողմ եռանկյան ներքևի մասում՝ «ՀԱՆՈՒՆ», իսկ դափնեպսակի ներքևում՝ «ՓՐԿՈՒԹՅԱՆ» բառերը: Մեդալն ունի վեցանիստ սեղա¬նաձև կախիչ՝ 30Х45 չափսերով, վրայից ուղղանկյունաձև ոսկեգույն շերտաձողիկ՝ «ՀԱՅԱՍՏԱՆ» մակա¬գրությամբ: Կախիչի դարձերեսին ամրացված է մեդալը հագուստին ամրացնելու հարմարանք: Կախիչը նարնջագույն է (CMYK 0;60;80;20), 1 ուղղահայաց 7 մմ լայնությամբ կապույտ զոլակով (CMYK 100;100;6;31), որը կախիչի ձախ եզրագծից ունի 3 մմ հեռավորություն: Մեդալի դարձերեսին հորիզոնական 3 տողերով գրված են «ՀՀ ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ» բառերը, 2 տողով՝ «MINISTRY OF EMERGENCY SITUATIONS RA» բառերը և լազերային եղանակով դաջվում է մեդալի համարը (սկսած 0648-ից): Կատարվող գրառումների անվանանիշը 3.2 մմ ուղղահայաց ուղղությամբ, տառատեսակը ՝ Arial Armenia: Մեդալների արտաքին տեսքը պետք է համապատասխանի համաձայնեցված նմուշի արտաքին տեսքին՝ ունենալով նույն համաձուլվածքը, ռելիեֆիային պատկերները, գրվածքները, ժապավենը և գունավորումները: Թվային տեխնոլոգիաների կիրառմամբ դրոշման եղանակը ապահովում է մեդալների միանմանությունը և չափսերի բարձր ճշտությունը: Ցանկացած երկու կրծքանշանի չափսերի շեղումը ոչ ավել քան 0.1 մմ: Մեդալի դարձերեսին

				դրոշմման եղանակով դաջվում է արտադրողի ապրանքային նշանը: Չի թույլատրվում ` - Պատկերների և գրվածքների աղավաղում: - Մակերեսի վրա խազեր, քերծվածքներ, այլ հետքեր: Մատակարարը մեդալների նմուշների եռաչափ (3D) մոդելավորված նկարները և հետո նմուշները պետք է նախապես համաձայնեցնի պատվիրատուի հետ: Մեդալի հետ տրվում է վկայական (էսքիզ 1):

ПОЛНОЕ ОПИСАНИЕ

предлагаемого товара

УРАРТУ ТПК АООТ в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ԷԱՃԱՊՁԲ-ԱԻՆ-22/27 ниже представляет полное описание предлагаемого им товара.

Номер лота	Предлагаемый товар			
	фирменное наименование	товарный знак	наименование производителя	технические характеристики
1				